

“ ԱԼՌԱՏ ՄԱՅՆԻՆՔ ”

Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերություն

ՀՀ Լոռու մարզի «Արջուտի ձոր» տեղամասի ավագակոպճային
խառնուրդի երևակման տարածքում 2022-2023թթ. երկրաբանական
ուսումնասիրության աշխատանքների կատարման ծրագրի Շրջակա
միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
(ԼՐԱՄՇԱԿՎԱԾ)

“ԱԼՌԱՏ ՄԱՅՆԻՆՔ” ՍՊԸ տնօրեն՝

Մ.Պողոսյան

2022թ.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	3
1.1.Նախատեսվող գործունեության նկարագրությունը.....	3
1.2.Հանքերնական երկրաբանական բնութագիրը	7
1.3. Նախագծման նորմատիվ-իրավական հիմքը	7
2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ.....	11
2.1. Գտնվելու վայրը.....	11
2.2. Ֆիզիկաաշխարհագրական պայմաններ.....	11
2.3. Կլիմա.....	17
2.4. Մթնոլորտային օդ	23
2.5. Ջրային ռեսուրսներ	23
2.6. Հողային ծածկույթ.....	26
2.7. Բուսական աշխարհ	33
2.8. Կենդանական աշխարհ	35
2.9. Բնության հատուկ պահպանվող տարածքներ (ԲՀՊՏ)	36
2.10. Հնագիտական և պատմամշակութային հուշարձաններ	38
2.11. Տարածքի ամփոփ բնապահպանական բնութագիրը	39
3. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ.....	40
4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻՎՐԱ ՍՊԱՍՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ	42
5. ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆԸ ԵՎ ՆՎԱԶԵՑՄԱՆԸ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ	46
6. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ (ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ) ՊԼԱՆ.....	47
Իրավիճակային հատակագիծ մշտադիտարկումների կետերով	50
Օգտագործած գրականության ցանկ.....	51

1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. Նախատեսվող գործունեության նկարագրությունը

Ընդերքի օգտակար հանածոների արդյունահանման նպատակով նախատեսվող երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների <<Արջուտի ձորի>> ավազակոպճային խառնուրդի հանքերակումը գտնվում է ՀՀ Լոռու մարզում, Արջուտ գյուղից 0,1-0,5կմ դեպի հարավ՝ համանուն ձորակի ավազանում և զբաղեցնում է մոտ 2.4 հա տարածք:

Տեղամասն իրենից ներկայացնում է ավազակոպճային խառնուրդով լցված (մոտ 500 մ երկարությամբ և 20-50մ լայնությամբ) գետային հեղեղատ, որի պաշարներից երկրաշարժից հետո օգտագործվել է շինարարական աշխատանքներ կատարելիս: Այդ հանված տեղամասերը հետագայում նորից լցվել են բերվածքներով՝ վերականգնելով նախկին ռելիեֆը:

Հանքերակման հետազոտման մեթոդիկան ընտրելիս հաշվի են առնված օգտակար հանածոյի ձևաբանությունը, տեղադրումը, դիրքը, տեղամասի երկրաբանական կառուցվածքը, երկրաբանահետախուզական աշխատանքների կատարման լեռնատեխնիկական պայմանները, տեղամասի չափերը, ռելիեֆի ձևն ու մերկացվածության աստիճանը և այլն:

Մակերեսային լեռնային փորվածքների անցում

Տեղանքի թեք ռելիեֆի և տարածքի ամբողջովին մերկացվածության պայմաններում ԱԿԽ-ի կուտակի հետախուզումը նախատեսվում է իրականացնել հետախուզահորերի միջոցով՝ հաշվի առնելով կուտակի մեծ ձգվածությունը և փոքր լայնությունները: Դրանք համապատասխանաբար կազմում են 488-501մ և 18-66մ: Արդյունաբերական կարգերով պաշարների եզրագծման համար հետախուզագծերի միջև հեռավորությունն ընդունվում է 100մ, իսկ դրանց վրա փորվածքների միջև հեռավորությունը B կարգի պաշարների եզրագծման համար ընդունված է 9-32մ:

Հետախուզահորերի կտրվածքը նախատեսվում է 1.5մ²(1.0x1.5մ):

Օգտակար հաստվածքի նմուշարկումը հետախուզահորերից նախատեսվում է ակոսային և համախառը նմուշների միջոցով: Հետախուզահորերը կանցվեն 6 հետախուզագծերի վրա՝ յուրաքանչյուրի վրա 3-ական հետախուզահոր, ընդամենը 18

հոր՝ 3-6 մ խորությամբ (կուտակի եզրային մասերում 3-ական մետր, իսկ կենտրոնում՝ 6մ խորությամբ), ընդհանուր 72 գծ.մ.:

Լեռնային փորվածքների փաստագրում

Մանրամասն երկրաբանական փաստագրման ենթակա են բոլոր լեռնային փորվածքները:

Երկրաբանական փաստագրման աշխատանքները նախատեսվում է կատարել 1:100 մասշտաբով: Այդ աշխատանքների ծավալները կկազմեն ընդամենը 72 գծ.մ հետախուզահորերի փաստագրում:

Երկրաբանահանույթային աշխատանքներ

Տեղամասի 1:1000 մասշտաբի երկրաբանական քարտեզի կազմման համար նախատեսվում է կատարել երկրաբանական հանույթ 2.4հա տարածքի վրա:

Նմուշարկում

Նմուշարկումն իրականացվելու է հետախուզահորերից:

Օգտակար հանածոյի նյութական, հատիկային կազմը և տեխնոլոգիական հատկությունները որոշելու նպատակով նախատեսվում է.

- համախառն նմուշների վերցնում –յուրաքանչյուր հորից 1 նմուշ, ընդամենը 18 նմուշ: Նմուշները կընդգրկեն ԱԿԽ-ի հաստվածքն ամբողջ հզորությամբ՝ քերվածքային ձևով: Տեղում կրճատելու միջոցով մեկ նմուշի քաշը կհասցվի մոտ 50 կգ-ի, որը կուղարկվի համապատասխան լաբորատորիա:

Լաբորատոր ուսումնասիրություններ

Վերցված բոլոր 18 նմուշները պետք է ենթարկվեն համապատասխան լաբորատոր ուսումնասիրությունների ու փորձարկումների՝ ըստ համապատասխան ԲՕՇ-երի պահանջների: Նմուշները պետք է ենթարկվեն ֆիզիկամեխանիկական հատկությունների, հատիկաչափական հետազոտման և սիլիկատային անալիզի՝ դրանցում առկա հիմնական բաղադրիչների քանակը որոշելու նպատակով:

Հումքի ծավալային զանգվածի որոշում

ԱԿԽ-ի հումքի ծավալային զանգվածն անհրաժեշտ է որոշել բնական վիճակում և ըստ տարատեսակների՝ կոպիճ և ավազ, նույն նմուշներով որոշելով հումքի խոնավության չափը:

Նախատեսվում է դաշտային պայմաններում հետազոտման ենթարկել 6 համախառը նմուշներ՝ յուրաքանչյուր հետախուզագծից 1-ական նմուշ:

Տոպոմարկշեղերական աշխատանքներ

Նախատեսվում է հետախուզվող տեղամասում կատարել 1:1000 մասշտաբի տոպոգրաֆիական հանույթ 2.4 հա ընդհանուր տարածքի վրա, բոլոր հետախուզական փորվածքների գործիքային տեղադրմամբ տոպոհիմքի վրա: Աշխատանքները կկատարվեն պայմանագրային հիմունքներով:

Ինժեներատեխնիկական և հիդրոտեխնիկական ուսումնասիրություններ

Տեղամասի ինժեներատեխնիկական և հիդրոտեխնիկական պայմանների ուսումնասիրման նպատակով նախատեսվում են համապատասխան դիտարկումներ հետախուզական փորվածքների անցման ընթացքում, ինչպես նաև տեղամասի հարևան տարածքների տեղազննում գեոդինամիկ երևույթների առկայության պարզաբանման նպատակով: Նման երևույթների առկայության կամ ջրատար հորիզոնների հայտնաբերման դեպքում կիրականացվի դրանց ուսումնասիրում մասնագիտացված կազմակերպության կողմից:

Փորվածքների լցում

Ինչպես նշվել է վերը՝ բուսահողային շերտը գործնականում բացակայում է: Հետախուզական հորերից հեռացված զանգվածը ենթակա է հետ վերադարձման հանված տարածքներ և պետք է կատարվի ամրացում-նստեցում /տրամբովկա/: Փորվածքներից ընդհանուր հեռացված ապարների ծավալը կկազմի.

$72\text{գծ.մ.}\times 1.5\text{մ}^2=108\text{մ}^3$, որից որպես նմուշ կօգտագործվի՝ $18\text{մ}\times 0.05\text{մ}^3=0.9\text{մ}^3$, այսինքն՝ փորվածքներ հետ կլցվի մոտ 107մ^3 լեռնային զանգված:


Ապարների ռադիոակտիվության որոշում

Նախագծով նախատեսված հիմնական աշխատանքներին զուգընթաց իրականացվելու է ապարների ռադիոակտիվության ուսումնասիրություններ:

Բոլոր լեռնային փորվածքները ենթարկվելու են γ -պրոֆիլացման: Դիտարկման կետերի ֆիքսումն իրականացվելու է համաձայն գործող նորմերի՝ հետախուզահորերում և խրամում 2 կետ 1մ^2 վրա:

Աշխատանքները կատարվելու են պայմանագրային հիմունքներով:

Մարզի քարտեզը



Նկար 1.

1.2. Հանքերնական երկրաբանական բնութագիրը

«Արջուտի ձոր» Տեղամասն իրենից ներկայացնում է ավազակոպճային խառնուրդով լցված (մոտ 500 մ երկարությամբ և 20-50մ լայնությամբ) գետային հեղեղատ, որի պաշարներից երկրաշարժից հետո օգտագործվել է շինարարական աշխատանքներ կատարելիս: Այդ հանված տեղամասերը հետագայում նորից լցվել են բերվածքներով՝ վերականգնելով նախկին ռելիեֆը:

Տեղամասի ԱԿԽ-ի երևական տարածքը ներկայացված է ժամանակակից այլուվիալ-պրոլյուվիալ առաջացումներով, որտեղ գերակշռում են միջին եոցենի հասակի Բագումի և Շիրակի շերտախմբերի հրաբխածին առաջացումների գլաքարեր, կոպիճ և ավազ:

Ապարները կայուն են, քիմիական ակտիվ տարրեր չեն պարունակում, ամուր են:

ԱԿԽ-ն ներկայացված է շերտաձև մարմնի տեսքով, զբաղեցնելով Արջուտի ձորի անջուր հունը, տեղադրված հրաբխածին անդեզիտային լավաների շերտախմբի վրա: ԱԿԽ-ի հզորությունը տատանվում է 2-5մ սահմաններում, ունի միջօրեականին մոտ տարածում և մակերեսում ամբողջովին մերկացվածություն:

1.3. Նախագծման նորմատիվ-իրավական հիմքը

Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը մշակվել է ՀՀ բնապահպանական օրենսդրության, ՀՀ կառավարության որոշումների, բնապահպանության նախարարի հրամանների, գործող մեթոդակարգերի հիման վրա:

Ուսումնասիրման աշխատանքներն իրականացնելիս ընկերությունն առաջնորդվելու է մասնավորապես հետևյալ օրենսդրական իրավական ակտերով.

- ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք (ՀՕ-280, 28.11.2011թ.), որով սահմանվում են ՀՀ տարածքում ընդերքօգտագործման սկզբունքներն ու կարգը, կարգավորվում են ընդերքն օգտագործելիս բնությունը և շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պաշտպանության, աշխատանքների կատարման անվտանգության ապահովման, ինչպես նաև ընդերքօգտագործման ընթացքում պետության և անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները:

- ՀՀ Հողային օրենսգիրք (ՀՕ-185, 02.05.2001թ.), որը սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպական-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը:

- ՀՀ Ջրային օրենսգիրք (ՀՕ-373, 04.06.2002թ.), որով կարգավորվում են ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերությունները:

- ՀՀ Անտառային օրենսգիրք (ՀՕ-211, 24.10.2005թ.), որը կարգավորում է ՀՀ անտառների և անտառային հողերի կայուն կառավարման՝ պահպանության, պաշտպանության, վերականգնման, անտառապատման և արդյունավետ օգտագործման, ինչպես նաև անտառների հաշվառման, մոնիթորինգի, վերահսկողության և անտառային հողերի հետ կապված հարաբերությունները:

- «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-22, 23.11.1999թ.), որը սահմանում է պետական քաղաքականությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում:

- «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-52, 03.04.2000թ.), որը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը:

- «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-121, 11.10.1994թ.), որի առարկան մթնոլորտային օդի մաքրության ապահովման, մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների նվազեցման ու կանխման բնագավառում հասարակական հարաբերությունների կարգավորումն է:

- «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-211, 27.11.2006թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական,

առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները:

- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-110, 21.06.2014թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները:

- ՀՀ կառավարության 21.10.2021թ.-ի թիվ 1733-Ն որոշում, որով սահմանվել է բնության և շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի (այսուհետ՝ դրամագլուխ) օգտագործման և հատկացումների չափերի հաշվարկման հետ կապված հարաբերությունները:

- ՀՀ կառավարության 14.12.2017թ.-ի թիվ 1643-Ն որոշում, որը կիրառվում է Հայաստանի Հանրապետության տարածքում խախտված հողերի հաշվառման, հողաշինարարական, քարտեզագրման, կանխատեսվող ու իրականացման ենթակա ռեկուլտիվացման աշխատանքների նախագծման, ռեկուլտիվացման, ռեկուլտիվացված հողերի նպատակային նշանակության ուղղությունների որոշման, ինչպես նաև նպատակային ու գործառական նշանակությանը համապատասխան՝ դրանց հետագա օգտագործման ժամանակ:

- ՀՀ կառավարության 14.08.2014թ.-ի N781-Ն որոշում, որը սահմանում է Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման ընթացակարգը:

- ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N191-Ն որոշում, որը սահմանում է ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը:

- ՀՀ կառավարության 02.11.2017թ.-ի N1404-Ն որոշում, որով սահմանվել են հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և պակաս արդյունավետ հողերի

բարելավման համար հողի բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները:

- ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N71-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը:

- ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N72-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բույսերի Կարմիր գիրքը:

- ՀՀ կառավարության 25.09.2014թ.-ի N1059-Ա որոշում, որով հաստատվել է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և ծրագրի միջոցառումները:

- ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի N 967-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բնության հուշարձանների ցանկը ըստ տեսակների և տեղադիրքի:

- ՀՀ կառավարության 2017թ.-ի հունիսի 15-ի N676-Ն որոշում, որով հաստատվել է ընդերքօգտագործման թափոնների կառավարման պլանի և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանի օրինակելի ձևերը:

2.ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

2.1. Գտնվելու վայրը

Ընդերքի օգտակար հանածոների արդյունահանման նպատակով նախատեսվող երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների <<Արջուտի ձորի>> ավազակոպճային խառնուրդի երևակումը վարչական տեսակետից գտնվում է ՀՀ Լոռու մարզում, Արջուտ գյուղից 0,1-0,5կմ դեպի հարավ՝ համանուն ձորակի ավազանում և զբաղեցնում է մոտ 2.4 հա տարածք:


Տարածքի հյուսիսային մասը համայնքապատկան արդյունաբերական նշանակություն ունեցող հողամաս է, իսկ հարավային մասը տրված է վարձակալությամբ քաղաքացի Աղասի Արայի Հարությունյանին:

Ամենամոտ բնակավայրը Արջուտ գյուղն է, որի հետ այն հաղորդակցվում է 0.5 կմ երկարությամբ գրունտային ճանապարհով: Վանաձոր-Սպիտակ մայրուղու և Սպիտակ երկաթուղային կայարանի հետ հանքերևակումը կապված է համապատասխանաբար 0.3 կմ և 2.2կմ երկարությամբ ճանապարհով:

Ստորև բերվում է հայցվող տարածքի իրավիճակային հատակագիծը 1: 50000 մասշտաբի տոպոհիմքի վրա:

ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ
(հատված K-38-113-Բ թերթից)
Մասշտաբ 1:50000

Լորդրինասային համակարգը՝ WGS-84 (ARMREF 02)



1. X=4524052 Y=8447452
2. X=4524136 Y=8447462
3. X=4524212 Y=8447491
4. X=4524491 Y=8447401
5. X=4524553 Y=8447372
6. X=4524546 Y=8447426
7. X=4524457 Y=8447467
8. X=4524299 Y=8447512
9. X=4524225 Y=8447509
10. X=4524058 Y=8447516

Պ Ա Յ Մ Ա Ն Ա Կ Ա Ն Ն Շ Ա Ն Ն Ե Ր

Երկրաբանահետախուզական աշխատանքների ավարտագիր
 Ա/Չ Գուրգեն Քոչարյան *G Kocharyan*
 01.09.2021թ.
 վկայական N 0384 03.09.2019թ.



2.2. Ֆիզիկաաշխարհագրական պայմաններ



Ռելիեֆ

Արջուտի ձորի ԱԿԽ հանքերակույմը լեռնագրական տեսակետից գտնվում է Բազումի լեռնաշղթայի հարավային լանջին՝ Փամբակ գետի ձախ ափին:

Բազումի լեռնաշղթան պատկանում է Թոքր Կովկասի Վիրահայոց-Ղարաբաղի լեռնահամակարգի (միաթեք աստիճանաձև բեկորային զոնա) ներքին լեռնաշղթաների թվին և 66կմ երկարությամբ ձգվում է Սեպասարի սարավանդից մինչև Փամբակ գետի Գայլաձոր կիրճը: Լեռնաշղթան ունի 2800մ միջին, 2992մ (Ուրասար) առավելագույն բարձրություն:

Բազումի հորստ-կամարաձայքը համապատասխանում է երկրաբանական կառուցվածքին, դրան բնորոշ են համաչափ ուռուցիկ աստիճանաձև լանջեր: Տարածքի կառուցվածքային ռելիեֆին բնորոշ են երկրորդական կարգի կամարաձայքային (Ուրասարի, Չքնաղի), գմբեթաձև (Մայմեխի), գոգաձայքային կամ ձկվածքային (Գարգառի), գրաբեն-գոգաձայքային (Դիլիջանի) կառուցվածքներ:

Տարածքի երկրաձևաբանական միավորների տարածման սխեմատիկ քարտեզը ներկայացված է ստորև:



Նկար 3: Շրջանի մակերևույթի կողմնադրությունների քարտեզ - սխեմա (վերցված է Հայաստանի Ազգային ատլասից)

Նկար 4: Շրջանի մակերևույթի թեքությունների քարտեզ – սխեմա (վերցված է Հայաստանի Ազգային ատլասից):

Մեյամիկ բնութագիրը և տեկտոնիկան

ՀՀ տարածքում սողանքները զբաղեցնում են 1049,5 կմ² մակերես: Ըստ մարզերի այն ունի հետևյալ պատկերը

Շիրակի մարզում՝ 1,92 կմ²;

Լոռու մարզում՝ 371,4 կմ²;

Տավուշի մարզում՝ 327,09 կմ²;

Գեղարքունիքի մարզում՝ 57,03 կմ²;


Կոտայքի մարզում՝ 33,8 կմ²;

Արարատի մարզում՝ 13,37 կմ²;

Վայոց Ձորի մարզում՝ 58,74 կմ²;

Սյունիքի մարզում՝ 86,19 կմ²:


Ինչպես տեսնում ենք բերված տվյալներից սողանքներն ավելի շատ տարածված են ՀՀ Լոռու և Տավուշի մարզերում: Ինչն հիմնականում պայմանավորված է ռելիեֆի թեքությամբ, էոզիայի մակարդակով, երկրաբանական կառուցվածքի առանձնահատկություններով և լեռնային ապարների ֆիզմեխանիկական հատկություններով:



Նկար 5: ՀՀ հյուսիսային հատվածի սողանքների քարտեզ:
<http://www.mes.am/files/docs/1037.pdf>

Հայցվող տեղամասի հարակից շրջաններում՝ Արջուտ և նոր Խաչակապ գյուղերի մոտ սողանքային մարմիններ հայտնի չեն:

Հանքերևակման շրջանում սողանքային մարմիններ կամ սողանքածին երևույթներ առկա չեն, իսկ իրականացվելիք ուսումնասիրության աշխատանքների ընթացքում սողանքների առաջացման վտանգի ռիսկեր չկան (Նկար 6):




Նկար 6.


Հանքերևակման շրջանը տեկտոնական տեսակետից ունի բավական բարդ երկրաբանական կառուցվածք, որը պայմանավորված է դրա տեղադիրքով Փոքր Կովկասի մեզանտիկլինորիումի Սևան-Ամասիայի տեկտոնական գոտու հյուսիս-արևմտյան մասում՝ Կապան-Գոգարանի կիմերեյան ծալքավորության զոնայում (նկար 7):

Սևան-Ամասիայի տեկտոնական գոտին բնութագրվում է ինտենսիվ, որոշ տեղերում հավասարաթեք և հովհարաձև ծալքավորությամբ՝ բարդացված վերնետվածքներով և վարնետվածքներով:

Նկարագրվող տարածաշրջանում երկրաշարժերի հնարավոր ուժգնությունը կազմում է 8-9 բալ, առավելագույն հորիզոնական արագացումները 0,5g՝ ըստ Արտակարգ իրավիճակների նախարարի 2021թ. մարտի 31-ի 372-Ն հրամանով հաստատված ՀՀ տարածքի սեյսմիկ վտանգի, սեյսմիկ գոտիավորման քարտեզների տվյալների:



Նկար 7: ՀՀ տարածքի հավանական սեյսմիկ վտանգի գոտիավորման քարտեզ, ըստ է ՀՀՇՆ 20.04- «երկրաշարժադինացկուն շինարարություն. նախագծման նորմեր» հավելյալմասս 1 -ի:



Նկար 8: ՀՀ Հյուսիսային կեսի ակտիվ իսկվածքների սխեմատիկ քարտեզ (հասոված Հայաստանի ազգային ատլասից):

Շրջանի երկրաբանություն

Հանքերևակմանի շրջանն ունի բավական բարդ և հետաքրքիր երկրաբանական կառուցվածք, որը պայմանավորված է դրա տեղադիրքով Փոքր Կովկասի մեզանտիկլինորիումի Սևան-Ամասիայի տեկտոնական գոտու հյուսիս-արևմտյան մասում:

Շրջանի երկրաբանական կառուցվածքում (ըստ Գ.Մ.Հակոբյանի) մասնակցում են տարբեր հասակի երկրաբանական ֆորմացիաներ՝ միջին էոցենի հրաբխանստվածքային անդեզիտային, վերին էոցենի հրաբխանստվածքային ռիոլիտ-դացիտային, վերին էոցենի-օլիգոցենի տրախիանդեզիտադացիտային և չորրորդականի փշրաբեկորային: Շրջանում լայն տարածում ունեն նաև տարբեր հասակի և կազմի ներժայթքային առաջացումները: Դրանք տեղադրված են Սևան-Աքերինյան խորքային խզման առանցքային գծի երկայնքով:

Հանքերևակման հարակից տարածքի երկրաբանական կտրվածքը ներկայացված է հետևյալ տեսքով՝ ներքևից վերև:

Միջին էոցենի առաջացումները ներկայացված են հիմնականում հրաբխածին-նստվածքային ֆացիայով, ընդ որում կախված շերտագրական դիրքից, նյութական կազմից և ֆաունայի առանձնահատկություններից միջին էոցենի ստվարաշերտը բաժանվում է երկու շերտախմբերի՝ Շիրակի (տուֆիտներ ու ֆելզիտային տուֆեր) և Բագումի (պորֆիրիտներ, տուֆափշրաքարեր և տուֆաավազաքրեր):

Վերին պլիոցեն-ստորին միոցենի Ծաղկունյաց շերտախումբը ներկայացված է անդեզիտներով, անդեզիտաբազալտներով, դացիտներով և դրանց արգասիք հանդիսացող պեմզա-մոխրային առաջացումներով:

Ժամանակակից այրուվիալ նստվածքները տարածված են Փամբակ և Գարալի գետերի հովիտներում, հանդես են գալիս ոչ մեծ հզորության գլաքարերով, ավազաքարերով, ավազներով և կավերով:


Մերձհրաբխային առաջացումները փոքր ելքերի տեսքով պատռում են Բագումի շերտախմբի ապարներին և ներկայացված են անդեզիտաբազալտներով, անդեզիտներով, գաբրոներով և գաբրոդիաբազներով: Վերին էոցեն-ստորին օլիգոցենի հասակի ներժայթքված ապարները ներկայացված են դիորիտներով, գրանոդիորիտներով, քվարցային դիորիտներով, գրանիտներով և գրանոսիենիտներով:

2.3. Կլիմա

Արջուտի ձորի ԱԿԽ հանքերևակման շրջանի կլիման մեղմ է, բարեխառն, խոնավությունը՝ բավարար:

Հունվարի միջին ջերմաստիճանը՝ -6°C -ից մինչև -12°C , հուլիսինը՝ $10-18^{\circ}\text{C}$, տարեկան տեղումները 550-700մմ: Շրջանում ամեն տարի հաստատվում է կայուն ձնածածկ: Ամառները տաք են, համեմատաբար խոնավ: Միջին և բարձրադիր գոտում ձմեռը տևական է, ցուրտ:

Ստորև 1-6 աղյուսակներում ամփոփված է տեղեկատվություն օդի ջերմաստիճանը, հարաբերական խոնավության, մթնլորտային տեղումների, ձնածածկի, քամիների, արևափայլի տևողության վերաբերյալ (ըստ մոտակա օդերևութաբանական կայանների տվյալների): Կլիմակայան գոտիների տարածման սխեմատիկ քարտեզը ներկայացված է ստորև:



Նկ.9: ՀՀ կլիմայական գոտիավորման սխեման:

Աղյուսակ 1.

Օդի ամսեկան և տարեկան ջերմաստիճանները

Բնակավայրի, կայանի անվանումը	Բարձրություն ծովի մակարդակից, մ	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Միջին տարեկան, °C	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավելագույն, °C
Վանաձոր	1376	-3,1	-2,0	1,7	7,6	12,1	15,1	18,0	17,9	14,4	9,0	3,8	-0,8	7,8	-30	36

Աղյուսակ 2.

Օդի հարաբերական խոնավությունը

Բնակավայրի, կայանի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %														
	Ըստ ամիսների												Միջին տարեկան	Միջին ամսական ժամը 15-ին	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր		ամենացուրտ ամսվա	ամենաշոգ ամսվա
Վանաձոր	70	71	72	69	74	75	75	74	73	73	73	71	73	59	56

Աղյուսակ 3.

Մթնոլորտային տեղումները և ձնածածկը

Կայանի անվանումը	Տեղումների քանակը, մմ միջին ամսական/առավելագույն տարեկան												Ձնածածկույթ			
	Ըստ ամիսների												Սարեկան	Առավելագույն տառնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Ձյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր				
Վանաձոր	17	25	36	62	95	92	56	41	34	45	35	19	557	24	60	62
	42	26	47	38	46	61	53	40	36	40	32	31	61			

Անշարժ աղբյուրներից վնասակար նյութերի արտանետումները մթնոլորտ, տ

	2014	2015	2016	2017	2018
Լոռի	43 932.5	46 865.4	51 231.5	47 060.4	35 027.8

Աղյուսակ 4.

Քամիներ

Կայանի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, հՊա	Ամիսներ	Կրկնելիությունը, % Միջին արագությունը, մ/վ								Անհողմությունների կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Միջին տարեկան ատամառումը, մ/վ	Ուժեղ քամիներով օրերի քանակը, օր
			Ուղղությունները											
			Հս	Հս-Արլ	Արլ	Հվ-Արլ	Հվ	Հվ-Արմ	Արմ	Հս-Արմ				
Վանաձոր	862.4	հունվար	4	3	10	7	4	13	49	10	20	3.1	2.2	13
			1.5	1.7	1.5	2.0	2.2	3.8	4.0	2.4				
		ապրիլ	7	7	23	12	5	9	27	10	23	2.3		
			1.5	1.9	1.6	2.2	1.3	2.7	2.3	1.2				
		հուլիս	10	17	43	21	2	1	3	3	22	1.9		
			1.9	1.9	1.8	2.1	1.6	1.8	1.7	1.5				
		հոկտեմբեր	6	9	28	18	4	5	20	10	37	1.6		
			1,3	1,3	1,3	1,7	1,4	1,8	1,9	1,3				

Աղյուսակ 5.

Արևափայլի տևողություն

Կայանի անվանումը	Ըստ ամիսների												Տարեկան գումարային
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	
Վանաձոր	156	137	161	158	191	221	197	181	201	178	137	132	2050

Աղյուսակ 6.

Անարև օրերի քանակը

Կայանի անվանումը	Ըստ ամիսների												Տարեկան գումարային
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	
Վանաձոր	5	5	5	4	2	2	3	4	5	3	5	5	45

2.4. Մթնոլորտային օդ

Հայցվող տարածքի համար մթնոլորտային օդի ֆոնային տվյալները բացակայում են՝ այդ տարածքում դիտակետեր չկան և դիտարկումներ չեն կատարվում:

Տարածքը գտնվում է բավականին հեռու շրջանի արդյունաբերական ձեռնարկություններից (մոտ 5-6կմ Վանաձոր քաղաքից): Մոտակա բնակավայրերը փոքր են, ոչ բնակաշատ:

Որոշակի պատկերացում տարածքի օդային ավազանների աղտոտվածության մասին կարելի է ստանալ հաշվարկային եղանակով: Այդ նպատակով ՀՀ բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ կողմից մշակվել է ուղեցույց ձեռնարկ, ուր ներկայացված են մթնոլորտային օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշների կախվածությունը տվյալ բնակավայրի ազգաբնակչության քանակից:

Աղյուսակ 7.

Բնակչության քանակը (հազ.)	Որոշված նյութերի ֆոնային կոնցենտրացիաները (մգ/մ ³)			
	Փոշի	Ծծմբի երկօքսիդ	Ազոտի երկօքսիդ	Ածխածնի օքսիդ
50 -125	0,4	0,05	0,03	1,5
10 - 50	0,3	0,05	0,015	0,8
< 10	0,2	0,02	0,008	0,4

Հայցվող տարածքում է գտնվում Արջուտ բնակավայրը, որի բնակչությունը չի գերազանցում 10.0հազ.մարդ: Հետևաբար, տեղամասի տարածքի համար որպես մթնոլորտային օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշ պետք է ընդունել. փոշի 0.2մգ/մ³, ծծմբի երկօքսիդ 0.02 մգ/մ³, ազոտի երկօքսիդ 0.008մգ/մ³ և ածխածնի օքսիդ 0.4մգ/մ³:

2.5. Ջրային ռեսուրսներ

Տարածքի ամենախոշոր ջրագրական միավորն են Փամբակ գետն է:

Գետի ակունքը Ջաջուռի թամբոցի արևելյան լանջին գտնվող աղբյուրն է, որը գտնվում է Շիրակի և Փամբակի հատման մասում: Գետի ավազանը 1370 քկմ է: Շրջապատված է՝ հյուսիսից Բագումի, հարավից՝ Փամբակի լեռնաշղթաներով: Գետահովիտն ընդարձակ կիրճ է, որը գետաբերանի հատվածում փոխվում է խորը կանիոնի:

Ստորև բերվում են Փամբակ գետի բազմամյա միջին տարեկան հոսքի բնութագրերը, միջին տարեկան առավելագույն և նվազագույն ծախսերը:


Աղյուսակ 8.

Գետը	Ծախսը, մ ³ /վ	Տարեկան հոսքը, մլն.մ ³	Հոսքի մոդուլը, լ/վ կմ ²	Հոսքի շերտի բարձրությունը, մմ	Հոսքի գործակիցը
Փամբակ	8.96	283	8.37	264	0.42

Աղյուսակ 9.

Գետը	Միջին տարեկան ծախսը, մ ³ /վ	Առավելագույն ծախսը, մ ³ /վ	Նվազագույն ծախսը, մ ³ /վ
Փամբակ	12.0	166	3.8

Ըստ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևաբանության և Մոնիթորինգի Կենտրոն» ՊՈԱԿ-ի 2020թ. տեղեկագրի տվյալների՝ Փամբակ գետի ջրի որակը Խնկոյան գյուղից վերև գնահատվել է «լավ» (2-րդ դաս), Սպիտակ քաղաքից ներքև և Վանաձոր քաղաքից վերև հատվածներում՝ «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված երկաթով, նիտրատ իոնով, ընդհանուր անօրգանական ազոտով և կախյալ նյութերով: Վանաձոր քաղաքից ներքև հատվածում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում իոնով:



Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս
Փամբակ	0.5 կմ գյ. Խնկոյանից վերև (1)	-	2-րդ	2-րդ
	0.5 կմ ք. Սպիտակից ներքև (2)	Նիտրատ իոն, ԸԱԱ	3-րդ	3-րդ
	1 կմ ք. Վանաձորից վերև (3)	Նիտրատ իոն, երկաթ, ԿՆ	3-րդ	3-րդ
	0.5 կմ ք. Վանաձորից ներքև (4)	Նիտրատ իոն, մոլիբդեն, երկաթ, ԿՆ	3-րդ	5-րդ
		Նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, ԸԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	4-րդ	
	Ամոնիում իոն	5-րդ		

ԸԱԱ ընդհանուր անօրգանական ազոտ
ԿՆ կախյալ նյութեր

2.6. Հողային ծածկույթ

Բուն հայցվող տեղամասի տարածքում հողային ծածկույթը բացակայում է:

Շրջակա տարածքների հողային ծածկույթը բազմազան է ու ենթակա բարձունքային գոտիականության:

Հայցվող տարածքում սեփականաշնորհված հողեր են, որոնց օգտագործման համար առկա են սեփականատերերի համաձայնությունները:

Համայնքի վարչական սահմաններում առկա են խախտված հողեր, մասնավորապես Քարաբերդի ոսկու հանքավայրի Կենտրոնական տեղամասում, որտեղ ընթանում են շահագործողական աշխատանքներ, Փամբակի գրանիտի հանքավայրը, որը նույնպես շահագործվում է և Նոր Խաչակապի ԱԿԽ-ի շահագործվող հանքավայրը:

Ընհանրապես հողային ծածկույթի աղտոտման աղբյուրներ կարող են հանդիսանալ՝ մետաղաձուլական գործարանները, արդյունաբերական և կենցաղային թափոնները, ժամանակակից գյուղատնտեսությունը, տրանսպորտը: Մարդու գործունեության արդյունքում միջավայր թափանցած ծանր մետաղների մեծ մասը կուտակվում է հողում: Գյուղատնտեսական աղտոտման հիմնական աղբյուրներն են՝ հանքային պարարտանյութերը, թունաքիմիկատները, անասնապահական համալիրները: Հանքային պարարտանյութերի կանոնների խախտման դեպքում մեծանում է հողի թթվայնությունը, փոխվում է հողային օգտագործման օրգանիզմների տեսակային կազմը, խախտվում է նյութերի շրջապտույտը, քայքայվում է հողի կառուցվածքը:

Տարածքի հողային ծածկույթի աղտոտվածության վերաբերյալ տեղեկատվությունը բերվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևաբանության և Մոնիթորինգի Կենտրոն» ՊՈԱԿ-ի 2019թ. տեղեկագրի տվյալներով: Նշենք, որ Վանաձոր համայնքի (բնակչությունը՝ 80000 մարդ, գոյացնում է տարեկան մոտ 25000 տոննա աղբ) աղբավայրը գտնվում է քաղաքից 10 կմ հեռավորության վրա՝ Արջուտ գյուղի հարակից տարածքում՝ հայցվող տարածքից մինչև 1կմ հեռավորության վրա: Աղբավայրը չունի պարիսպ, պահակակետ, ջրամատակարարում, էլեկտրամատակարարում:

2019 թվականին թափոնների հետազոտության նպատակով ուսումնասիրվել են Վանաձոր քաղաքի աղբավայրը (Արջուտ գյուղի մոտակայքում): «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» Ստոկհոլմի կոնվենցիայով ՀՀ ստանձնած պարտավորությունների կատարմանն աջակցելու նպատակով աղբավայրերին հարող տարածքներում կայուն օրգանական աղտոտիչների մնացորդային քանակությունները որոշելու համար աղբավայրերի հարակից տարածքներից վերցվել է հողի 26 փորձանմուշ՝ կայուն օրգանական աղտոտիչների պարունակությունները որոշելու համար: Յուրաքանչյուր նմուշում որոշվել է 19 քլորօրգանական պեստիցիդներ և 24 պոլիքլորացված բիֆենիլներ: Հետազոտված աղբավայրի հարակից հողային ծածկույթում ՀՔՑՀ իզոմերների կոնցենտրացիաները

չեն գերազանցում հողում համապատասխան ՍԹԿ-ները: 26 նմուշից 24-ում հայտնաբերվել է ԴԴՏ-ի իզոմերների կոնցենտրացիաներ, որոնցից մեկում դիտվել է գերազանցում ՍԹԿ-ից: Այլ պեստիցիդային ԿՕԱ-ների ազդող նյութերը, ինչպիսիք են հեպտաքլորը, ՀՔԷ-Բ, էնդոսուլֆանի իզոմերները, միրեքսը կա՛մ չեն հայտնաբերվում, կա՛մ հայտնաբերվում են ոչ էական քանակներով: ՀՔԲ հայտնաբերվում է հողի բոլոր (100%) նմուշներում իսկ ՀՔԷ-Ա դեպքում այդ ցուցանիշը մոտ է 85%, իսկ կոնցենտրացիաները գերազանցում են ՍԹԿ-ները համապատասխանաբար 1.5 և 2.0 անգամ: Ալդրինի, դիլդրինի, էնդրինի դեպքում ՍԹԿ-ները ցածր են (ալդրին՝ 2.5մկգ/կգ, դիլդրին՝ 0.5 մկգ/կգ, էնդրինը՝ 1մկգ/կգ) և հայտնաբերած կոնցենտրացիաների փոքրիկ թվային արժեքները (համապատասխանաբար՝ 5.18 մկգ/կգ, 18.88 մկգ/կգ, 1.51 մկգ/կգ) արդեն իսկ գերազանցում են ՍԹԿ-ները: Դիօքսինանման ՊՔԲ-ների գումարային կոնցենտրացիաները հողի նմուշներում չեն գերազանցում նորմատիվային գումարային արժեքը (բացառությամբ 2 հողի նմուշների), ոչ դիօքսինանման ՊՔԲ-ների գումարային կոնցենտրացիաները հողի նմուշներում շատ դեպքերում գերազանցում են ՍԹԿ-ն 1.04-50 անգամ: Ոչ դիօքսինանման ՊՔԲ-ների կոնցենտրացիաները հողի նմուշներում գերազանցում են դիօքսինանման ՊՔԲ-ների կոնցենտրացիաները 8.5-71.7 անգամ:

Ստորև բերվում է տարածաշրջանում հողերի հիմնական տիպերի տարածման քարտեզը:

Նկար 10

հողերի բնական տիպերի տարածման քարտեզ

- 1** Լեռնամարզագետնային թույլ ճնահողային խորքային - չհագեցած միջին հզորության կավավազային
- 2** Մարզագետնափաստանային սևահողանման մանրախճաքարքարոտ փոքր հզորության կավավազային տեղ-տեղ թույլ հողմահարված
- 3** Գորշ անտառային ուժեղ չհագեցած մանրախճաքարքարոտ մեծամասամբ միջին հզորության կավավազային տեղ-տեղ թույլ և միջին հողմահարված
- 4** Գորշ անտառային ուժեղ չհագեցած կավայնացված մեծամասամբ միջին հզորության և հզոր տեղ-տեղ թույլ հողմահարված
- 5** Գորշ անտառային թույլ չհագեցած մանրախճաքարքարոտ մեծամասամբ միջին հզորության կավավազային տեղ-տեղ թույլ հողմահարված
- 6** Գորշ անտառային թույլ չհագեցած տափաստանացված փոքր հզորության կավավազային մեծամասամբ թույլ հողմահարված
- 7** Գորշ անտառային թույլ չհագեցած տափաստանացված մեծամասամբ միջին հզորության կավավազային մշակովի
- 8** Գարշնագույն անտառային լվացված մանրախճաքարքարոտ մեծամասամբ միջին հզորության կավավազային տեղ-տեղ թույլ հողմահարված
- 9** Գարշնագույն անտառային լվացված տափաստանացված մեծամասամբ միջին հզորության կավավազային թույլ հողմահարված
- 10** Գարշնագույն անտառային լվացված տափաստանացված փոքր հզորության կավավազային մեծամասամբ միջին հողմահարված
- 11** Գարշնագույն անտառային լվացված տափաստանացված մեծամասամբ միջին հզորության կավավազային մշակովի
- 12** Սևահողեր լվացված միջին հումության մեծամասամբ միջին հզորության կավավազային տեղ-տեղ թույլ հողմահարված



- 13** Սևահողեր լվացված թույլ հումության մեծամասամբ հզոր կավային մշակովի
- 14** Սևահողեր լվացված թույլ հումության փոքր հզորության կավային մշակովի
- 15** Սևահողեր տիպիկ ալրակարբոնատային միջին հումության մեծամասամբ միջին հզորության կավավազային
- 16** Սևահողեր տիպիկ ալրակարբոնատային թույլ հումության մեծամասամբ միջին հզորության կավային մշակովի
- 17** Սևահողեր սովորական ալրակարբոնատային թույլ հումության փոքր հզորության կավավազային մեծամասամբ թույլ հողմահարված
- 18** Սևահողեր սովորական ալրակարբոնատային թույլ հումության միջին հզորության մեծամասամբ կավավազային մշակովի
- 19** Սևահողեր սովորական ալրակարբոնատային թույլ հումության փոքր հզորության կավավազային տեղ-տեղ թույլ հողմահարված մշակովի
- 20** Սևահողեր սովորական գլաքարային թույլ հումության մեծամասամբ միջին հզորության կավային մշակովի
- 21** Գետահովտադարավանդային մարզագետնային փոքր հզորության կավավազային

Լեռնամարգագետնային հողերը բնորոշվում են մակերեսային և խորքային թաղված ուժեղ քարքարոտությամբ:

Հանքերևակման տարածաշրջանին առավել բնորոշ է լեռնամարգագետնային հողերի ճմային ենթատիպը, դրանց քիմիական և ֆիզիկական հատկությունները ներկայացված են ստորև, աղյուսակ 10-ում:

Աղյուսակ 10.

Խորությունը, սմ	Հումուսը, %	Ընդհանուր ազոտը, %	Կլանված հիմքերի գումարը, մ/էկվ 100գ հողում	pH-ը ջրային քաշվածքում	Հիդրոլիզային թթվությունը, մ/էկվ 100գ հողում
0-8	21.6	1.03	22.2	5.2	11.0
8-27	10.7	0.63	25.7	4.9	13.2
27-55	4.8	0.40	15.9	5.5	6.9
0-7	15.8	0.78	37.3	5.5	10.6
7-15	10.7	0.67	22.9	5.1	9.8
15-27	7.6	0.48	23.9	5.3	9.4
27-41	4.3	0.35	14.9	5.5	8.0

Մարգագետնատափաստանային հողերը հանդես են գալիս սևահողանման ենթատիպով: Այս տիպի հողերը պարունակում են մեծ քանակությամբ հումուս (9-10, մինչև 18%), ունեն լավ արտահայտված հատիկակնձկային ստրուկտուրա, կավավազային մեխանիկական կազմ, հզոր են կամ միջակ հզոր՝ հողաշերտի հզորությունը տատանվում է 40-50սմ-ի սահմաններում:

Սևահողանման մարգագետնատափաստանային հողերի քիմիական և ֆիզիկական հատկությունները ներկայացված են աղյուսակ 11-ում:

Աղյուսակ 11.

Խորությունը, սմ	Հումուսը, %	Կլանված հիմքերի գումարը, մ/էկվ 100գ հողում	pH-ը ջրային քաշվածքում	Հիդրոլիտիկ թթվությունը, մ/էկվ 100գ հողում
0-5	18.1	49.3	6.2	4.6
5-14	10.8	49.4	6.7	8.0
14-27	7.8	44.7	6.7	7.5
27-40	5.8	28.6	6.8	4.6
40-61	2.0	22.7	6.8	2.7
61-82	0.	21.5	6.9	1.6
82-120	0.4	22.0	7.0	1.4

Գորշ անտառային հողերն իրենց ամբողջ պրոֆիլում ունեն գորշ դարչնագույն գունավորում, ծագումնաբանական հորիզոնների թույլ տարբերակում, ընկուզանման կամ ընկուզակնձկային ստրուկտուրա: Հողերում հումուսի պարունակությունը կազմում է 7-12%: Հումուսի բաղադրությունում ֆուլվոթթուները գերակշռում են

հումինաթթուներին: Ռեակցիան չեզոք է կամ թույլ թթվային, կլանման տարողությունը բարձր:

Գորշ անտառային հողերի քիմիական և ֆիզիկաքիմիական հատկությունները բերված են աղյուսակ 12-ում:

Աղյուսակ 12.

Խորությունը, սմ	Տոկոսներով		Կլանված հիմքերի գումարը, մ/էկվ 100գ հողում	Հիդրոլիզային թթվությունը	pH-ը KCl-ի լուծույթով մշակված
	հումուս	ընդհանուր ազոտ			
0-5	8.6	Չի որոշված	24.8	7.5	4.8
5-31	2.2	“---”	34.3	3.5	4.5
31-28	1.3	“---”	38.3	0.6	7.1
58-103	1.1	“---”	24.5	0.3	7.3
4-13	6.6	0.29	27.9	4.3	5.1
13-38	2.6	0.18	14.8	5.8	3.8
38-62	0.7	0.10	17.9	4.6	3.8
62-91	0.4	-	10.9	2.2	4.2
91-103	0.4	-	8.7	0.8	5.5

Լեռնաանտառային գոտու դարչնագույն անտառային հողերը բնութագրվում են դարչնագույն և մուգ-դարչնագույն գույնով, հումուսի բավական բարձր պարունակությամբ (10-14%), որը խորության ուղղությամբ արագ նվազում է: Հումինային նյութերում հումինաթթուների և ֆուլվոթուների քանակը գրեթե հավասար է:

Այս տիպի հողերը ունեն գլխավորապես կավավազային մեխանիկական կազմ: Կլանման տարողությունը բարձր է, կլանված կատիոններում գերակշռողը Ca-ն է: Ռեակցիան չեզոք է կամ թույլ հիմնային: Բնութագրվում են բարելավ ֆիզիկական և ջրաֆիզիկական հատկություններով, լավ արտահայտված ստրուկտուրայով: Տարածքում անտառային դարչնագույն հողերը ներկայացված են լվացված ենթատիպով:

Աղյուսակ 13.

Դարչնագույն անտառային լվացված հողերի քիմիական ու ֆիզիկաքիմիական հատկությունները

Հողատիպը և ենթատիպը	Խորությունը, սմ	Հումուսը, %	CO ₂ , %	Կլանված կատիոնների գումարը, մ/էկվ 100գ հողում	pH-ը ջրային քաշվածքում
1	2	3	4	5	6
Լվացված դարչնագույն անտառային	0-10	14.1	չկա	40.3	6.6
	10-26	3.7	չկա	39.1	6.7
	26-49	2.2	չկա	33.4	6.5
	49-64	1.4	չկա	38.6	6.8
	64-85	1.14	չկա	37.6	7.7
	85-107	0.8	չկա	38.9	7.3

Աղյուսակ 14.

Դարչնագույն անտառային հողերի ջրաֆիզիկական հատկությունները

Խորությունը, սմ	Տոկոսներով հողի կշռի նկատմամբ				Ջրաթափանցելիությունը	
	առավելագույն լիմոսով միջառաձգելիությունը	միջառաձգելիությունը	նվազագույն լիմոսով միջառաձգելիությունը	լիմոսով լիմոսով միջառաձգելիությունը	դիտումների ժամեր	դիտում
0-14	12.3	15.9	37.0	50.4	1-ին	1.08
14-35	10.9	14.3	33.6	45.5	2-րդ	0.93
35-50	10.6	12.0	31.4	36.8	3-րդ	0.88
50-94	9.7	12.3	30.2	36.2	4-րդ	0.88
94-115	6.1	11.3	27.8	35.8	-	-

Տարածքի սևահողերում առանձին ծագումնաբանական հորիզոնների քիմիական բաղադրությունը, մասնավորապես սիլիցիումի, ալյումինիումի, երկաթի, կալիումի պարունակության տեսակետից առանձնապես խիստ չի տարբերվում, նկատվում է դրանց հավասարաչափ կուտակում հողի պրոֆիլի սահմաններում:

Հողային լուծույթի ռեակցիան գլխավորապես չեզոք է (pH-ը տատանվում է 7-ի սահմաններում): Կլանող համալիրը հագեցված է հիմնականում Ca-ով և Mg-ով: Բնորոշ է կնձկային ստրուկտուրա: Հարուստ են ընդհանուր ազոտով (0.15-0.35%), ֆոսֆորական թթվով (0.15-0.26%) և կալիումով (1-2%):

Սևահողերի քիմիական ու ֆիզիկաքիմիական
հատկությունները

Հողատիպը և ենթատիպը	Հորիզոնները և խորությունը, սմ	Տոկոսներով			Կլանված կատիոնների գումարը, մ/էկվ 100գ հողում
		հումուս	ընդհանուր		
			ազոտ	CaCO ₃	
Սովորական սևահողեր	A ₁ 0-15	4.32	0.34	0.5	37.2
	A ₂ 15-29	2.77	0.23	0.6	36.1
	B ₁ 29-45	2.56	0.18	0.6	29.2
	B ₂ 45-62	2.09	0.15	1.6	37.2
	C 62-80	1.99	0.15	1.7	24.8
Լվացված սևահողեր	A ₁ 0-23	6.67	0.34	չկա	32.2
	A ₂ 23-43	6.59	0.32	չկա	33.4
	B ₁ 43-68	5.32	0.31	չկա	37.3
	B ₂ 68-83	1.64	0.20	չկա	28.5
	C 83-100	0.90	0.19	40.3	-

A – հողի վերին, հումուսով առավել հարուստ շերտ

B - անցողիկ հորիզոն

C – մայրական ապարատեսակ

Գետահովտադարավանդային հողերում ծագումնաբանական հորիզոնները թույլ են արտահայտված: Ունեն պարզ շերտավոր կառուցվածք, մեծ հզորություն և թեթև մեխանիկական կազմ (ավազային, կավավազային) և հատիկակնձկային ստրուկտուրա: Հումուսի պարունակությունը 1,5-2-ից մինչև 4-6%: Հողային լուծույթի ռեակցիան հիմնականում չեզոք է կամ թույլ հիմնային: Կլանման տարողությունը մեծ չէ (15-25 մ.էկվ 100գ հողում), կլանված կատիոնների կազմում գերակշռողը կալցիումն է:

Արջուտի ձորի ԱԿԽ-ի երևական տարածքում բուսահողային շերտը իսպառ բացակայում է:

2.7. Բուսական աշխարհ

Բազումի լեռնաշղթայի բուսական աշխարհը ներկայացված է անոթավորբույսերի ավելի քան 1033 տեսակներով, որոնք պատկանում են 436 ցեղերին և 98 ընտանիքներին:

Ստորև աղյուսակ 16-ում ներկայացված են Բագումի լեռնաշղթայի բուսական աշխարհի ծածկասերմերի առաջատար 10 ընտանիքները և դրանց տեսակների քանակը:

Աղյուսակ 16.

Հ/Հ	Ընտանիքը	Տեսակը	Տոկոս
1.	Աստղածաղկազգիներ	145	14
2.	Դաշտավլուկազգիներ	78	7.5
3.	Շրթնածաղկազգիներ	62	6.0
4.	Կաղամբազգիներ	57	5.5
5.	Բակլազգիներ	54	5.2
6.	Մեխակազգիներ	49	4.7
7.	Վարդազգիներ	48	4.6
8.	Խլածաղկազգիներ	44	4.3
9.	Նեխուրածաղկազգիներ	44	4.3
10.	Շուշանազգիներ	32	3.1

Շրջանի բուսածածկույթի համակցությունները անտառներն ու տափաստանային տեսակներն են: Հովտային մասերում տիրապետում է անտառային բուսածածկը՝ հաճարենու և կաղնու խմբակցություններով, դաշտային հատվածներում՝ հացազգի-տարախոտային և մարգագետնատափաստանային խմբակցությունները: Անտառային բույսերի՝ հաճարենու, կաղնու, հացենու, լորենու, թխկու, բոխու կողքին ժայռոտ քարաթափերում տարածված են մասրենու, ցաքու թփուտներ: Հանդիպում են վայրի տանձենի, խնձորենի, ընկուզենի, սալորենի, հարավ-արևելքում՝ դաժու, գիհու նոսրանտառներ:

Լեռների բարձրադիր գոտում իրար են հերթափոխում ենթալպյան և ալպյան խմբակցությունները:



Ցաքի



Վայրի սալորենի



Մարենի



Թխկի




Ասպլեն



Մագաստիսուկ

Ստորև նկար 11-ում ներկայացված է անտառային զանգվածքներով զբաղեցրած տարածքների բաշխումը:



Նկար 11.

2.8. Կենդանական աշխարհ

Կենդանական աշխարհում տիրապետում են անտառային և տափաստանային տիպերը: Կաթնասուններից հանդիպում են այծյամ, գորշ արջ, վարազ, գայլ, աղվես, կզաքիս, զգալի տարածում ունեն կրծողները:

Անտառն առատ է թռչուններով՝ ձվծվան, երաշտահավեր, կան սերինոսներ, խածկտիկներ, փետրավոր գիշատիչներից՝ բու, բվեճ, մորաճուռակ :



Գորշ արջ

Փոքրասիական
գետնասկյուռ



Բվեճ


Գորշ
սկանջեղ



2.9. Բնության հատուկ պահպանվող տարածքներ (ԲՀՊՏ)

Արջուտի ձորի ԱԿԽ-ի երևակումը Փամբակի և Ծաղկունյաց լեռնաշղթաների լանջերին գտնվող Կովկասյան մրտավարդենու, Մարգահովիտի և Գյուլաքարակի սոճու պետական արգելավայրերի, ինչպես նաև Դիլիջանի ազգային պարկի հետ գտնվում է միևնույն տարածաշրջանում (տես նկար 12):

Նկար 12



Կովկասյան մրտավարդենու արգելավայրը հիմնադրվել է 1959 թ., զբաղեցնում է 1000 հա տարածք, գտնվում է ՀՀ Լոռու մարզում, Փամբակի և Ծաղկունյաց լեռնաշղթաների լանջերին, ծովի մակարդակից 1900-2200 մ բարձրության վրա: Պահպանության օբյեկտներն են՝ ռելիկտային Մրտավարդ կովկասյան տեսակի թփուտները:

Մարգահովիտի արգելավայրը հիմնադրվել է 1971 թ., զբաղեցնում է 3368 հա տարածք, գտնվում է ՀՀ Լոռու մարզում, Փամբակի և Ծաղկունյաց լեռնաշղթաների լանջերին, Փամբակ գետի ավազանում, ծովի մակարդակից 1900-2200 մ բարձրության վրա: Պահպանության օբյեկտներն են՝ խոնավասեր անտառները և դրանց բնորոշ կենդանական աշխարհը:

Գյուլագարակի ստճու արգելավայրը հիմնադրվել է 1958 թ., զբաղեցնում է 2576 հա տարածք, գտնվում է ՀՀ Լոռու մարզում, Լոռու գոգավորությունը եզրավորող Բազումի

լեռնաշղթայի հյուսիսահայաց լանջերին, 1400-1900մ. բարձր. վրա Պահպանության օբյեկտներն են՝ եզակի ռելիկտային սոճու անտառները:

«Դիլիջան» ազգային պարկը զբաղեցնում է 33765 հա տարածք: Գտնվում է Տավուշի մարզում, Փամբակի, Արեգունու, Միափորի, Գուգարաց լեռնաշղթաների լանջերին, Աղստև և Գետիկ գետերի ավազաններում: Գտնվում է ծովի մակարդակից 1070-2400 մ բարձրության վրա: Այստեղ պահպանվում են կովկասյան տիպի մեզոֆիլ անտառները, հաճարենու և կաղնու համակեցությունները, կենու եզակի պուրակը: Ազգային պարկի տարածքով հոսում են Աղստև գետը և դրա հիմնական վտակները՝ Հովաջուրը, Շտողանաջուրը, Բլղանը, Հաղարծինը, Գետիկը: Ազգային պարկում գտնվում են Պարզ և Տզրկալիճը:

Նշված ԲՀՊՏ-ները գտնվում են Արջուտի ձորի ԱԿԽ երևակումից 10 – 20 կմ հեռավորության վրա:

2.10. Հնագիտական և պատմամշակութային հուշարձաններ

Հայցվող տարածքի նախնական ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռնում եզրակացնել, որ ընդերքօգտագործման համար նախատեսված անխաթար տարածքի ռելիեֆին բնորոշ առկա առանձնահատկությունները և ձորակի անմիջականորեն հեղեղատում գտնվելու փաստը հնարավորություն են տալիս միանշանակ փաստել, որ լեռնազանգվածի այս հատվածը ոչ մշտական է և ոչ էլ ժամանակավոր բնակության համար պիտանի չի եղել հնադարում և մարդը չի բնակվել այս տարածքներում: Կենտրոնական ձորով և հարակից ձորակներով կտրտված հանդամասում չեն փաստագրվել պատմական որևէ ժամանակաշրջանի վերագրվող բնակության հետքեր կամ մշակութային գործունեության մնացորդներ: Հայցվող տարածքում և դրա անմիջական մերձակայքում ու շրջապատում հնագիտական հուշարձանների վերգետնյա նշաններ չկան, չեն գտնվել նաև նյութական մշակույթի մնացորդներ: Աշխատանքների որևէ փուլում դրանց հայտնաբերման պարագայում, աշխատանքները անհապաղ պետք է դադարեցվեն և փաստի մասին իրազեկվեն համապատասխան կառույցները:

Տարածքի գնահատման համար օգտագործվել են նաև ՀՀ կառավարության 2007 թվականի մարտի 15-ի թիվ 385-Ն որոշման հավելված 6-ը, որով հաստատվել է ՀՀ Լոռու մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկը: Արջուտ համայնքում է գտնվում Առաքելոց Խաչ անվանվամբ մատուռը:

2.11. Տարածքի ամփոփ բնապահպանական բնութագիրը

Հանքերնակման տարածքի ներկայիս բնապահպանական իրավիճակը կարելի է գնահատել որպես բարվոք:

Թեկուզ տեղանքում չեն իրականացվել հատուկ հետազոտություններ օդային ավազանի, մակերևութային և ստորգետնյա ջրային ռեսուրսների և հողածածկի աղտոտվածության վերաբերյալ, սակայն նախկինում որևէ գործունեության բացակայությունը հիմք է հանդիսանում ենթադրելու, որ շրջակա միջավայրի աղտոտվածությունը չի գերազանցում բնական մակարդակը:

3.ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ՀՀ Լոռու Մարզի Տարածքը - 3750 քառ.կմ
Գյուղատնտեսական հողատարածքը - 250817 հա
այդ թվում՝ վարելահողեր - 41996 հա
Մարզկենտրոնը - ք. Վանաձոր
Քաղաքային համայնքներ - 8
Գյուղական համայնքներ - 105
Գյուղական բնակավայրեր - 122
Բնակչությունը (մշտական), 2011թ. հունվարի 1-ի դրությամբ - 281.7 հազ.մարդ
այդ թվում՝
քաղաքային - 165 .9 հազ. մարդ
գյուղական - 115.8 հազ. մարդ

ՀՀ Լոռու մարզը տարածքի մեծությամբ ու բնակչության թվաքանակով երրորդն է հանրապետությունում (գրադեցնում է ՀՀ տարածքի 12.7 %-ը): Գտնվում է հանրապետության հյուսիսում, սահմանակից է Վրաստանի Հանրապետությանը (110կմ երկարությամբ), արեւմուտքից Շիրակի, արեւելքից Տավուշի, հարավից Կոտայքի եւ Արագածոտնի մարզերին: Սահմանամերձ բնակավայրերն են Արծնի, Ապավեն, Ձորամուտ, Պաղաղբյուր, Ջիլիզա:

Մարզի տարածքով են անցնում Թբիլիսի-Երեւան երկաթուղու մի հատվածը:

Մարզի տնտեսությունը աչքի է ընկնում իր բազմազանությամբ: Այստեղ կան արդյունաբերական և հանքարդյունահանման կազմակերպություններ, զարգացած է գյուղատնտեսությունը, ինչպես նաև հանգստի և տուրիզմի ինդուստրիան:

Մարզի արդյունաբերության հիմնական ուղղությունները մշակող, մետաղագործական և սննդի արտադրական ճյուղերն են:

Գյուղատնտեսության ոլորտում առանձնանում են հացահատիկի, կարտոֆիլի, բանջարեղենի և անասնապահական մթերքի արտադրությունները: Գյուղատնտեսական նշանակության հողերի մակերեսը կազմում է 251198 հա, այդ թվում վարելահողեր՝ 42120 հա:

2009թ.-ին մարզի տնտեսության հիմնական ճյուղերի տեսակարար կշիռները հանրապետության համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն՝ 6.6 %,
- գյուղատնտեսություն՝ 6.7%,
- շինարարություն՝ 2.5 %,
- մանրածախ առևտուր՝ 2.1 %,
- ծառայություններ՝ 1.9 %

Մարզկենտրոնը Վանաձոր քաղաքն է, որը գտնվում է Փամբակ և Բազում լեռնաշղթաների միջլեռնային գոգավորություններում, Տանձուտ և Փամբակ գետերի միախառնման վայրում, ծովի մակերևույթից 1350 մ բարձրության վրա: Քաղաքի բնակչությունը առ 01.01.2011 կազմում է 105 հազ.մարդ:

Անմիջապես հանքերևակման մերձակայքում է գտնվում Արջուտ բնակավայրը:

Բնակավայրի մակերեսը կազմում է 26.95 կմ², բնակչությունը 2008՝ 1433 մարդ:

Համայնքը Գուգարքի տարածաշրջանում է, Վանաձոր քաղաքից 17կմ հեռավորության վրա:

Համայնքի վարչական տարածքի մեջ մտնում է Արջուտ համայնքը և նրան կից Արջուտ կայարան բնակավայրը: Վերջինս ստեղծվել է որպես երկաթուղային կայանին կից ավան և համանուն գյուղից հեռու է 1-2կմ: Նախկինում ունեցել է Արջուտ, Արջիտի անվանումները: Ընկած է Վանաձոր-Սպիտակ ավտոմայրուղուց աջ:

Գյուղը տեղադրված է Փամբակի գոգավորությունում, բլրապատ, մեղմաթեք լեռնալան ջի վրա՝ ծովի մակարդակից 1400-1600մ բարձրության վրա: Կլիման բարեխառն լեռնային է, տևական, ցուրտ ձմեռներով:

Ամեն տարի հաստատվում է կայուն ձնածածկույթ: Ամառները տաք են, համեմատաբար խոնավ: Տարեկան թափվում են 600-700մմ մթնոլորտային տեղումներ:

Ագրոկլիմայական տեսակետից ընկած է մասնակի ոռոգման գոտում: Ունի ածխաթթվային հանքային աղբյուրներ եւ տուֆի պաշարներ:

1897 թ-ին համայնքն ունեցել է 574, 1926 թ-ին՝ 823, 1939 թ-ին՝ 1106, 1970 թ-ին՝ 2045 բնակիչ: Ըստ ազգային վիճակագրական ծառայության տվյալների 2011 թ-ին համայնքի բնակչությունը կազմել է 1128 մարդ: Սեռային կազմում տղամարդիկ կազմում են 48%, կանայք՝ 52%: Ունի միջնակարգ դպրոց, գրադարան, բուժկետ, կապի հանգույց:

Գյուղատնտեսական հողահանդակներում մեծ բաժին ունեն վարելահողերը (170հա), կան պտղատու այգիներ (6հա): Պետական հողերը գլխավորապես օգտագործվում են որպես արոտավայրեր, խոտհարքեր, վարելահողեր՝ կազմելով համապատասխանաբար 780, 73, 77 հեկտար:

Զբաղվում են խոշոր եւ մանր եղջերավոր անասնաբուծությամբ, մեղվաբուծությամբ:

Միևնույն ժամանակ պետք է նշել, որ գոյություն ունեցող տնտեսական իրավիճակը չի կարող ապահովել թեկուզ միջին կենսամակարդակ, ինչի վկայությունն է նաև ամբողջ մարզի և մասնավորապես մերձակա գյուղերի բնակչության նվազումը վերջին 5 տարվա ժամանակահատվածում: Տարածաշրջանում առկա է ազատ աշխատուժ, այդ թվում նաև մերձակա գյուղերում: Այս պայմաններում հանքարդյունաբերության զարգացումը կարող է զգալի դերակատարում ունենալ տնտեսական զարգացման գործընթացում: Սակայն դա հնարավոր է միայն մարզի հիմնական տնտեսական և բնապահպանական գործոնի՝ հանգստավայրերին և բնական միջավայրին չվնասելու պայմանով:

4.ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՍՊԱՍՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Ծագումնաբանության առումով Արջուտի ձորի ԱԿԽ երևակումը ներկայացված է գետաբերուկային ավազակոպճային խառնուրդով: Հումքի կազմում մասնակցում են միջին էոցենի հասակի հրաբխային և ինտրուզիվ ապարների բեկորներ և դրանց ավազը, փոքր քանակությամբ կավային նյութով: Ապարները քիմիապես ակտիվ միացություններ չեն պարունակում:

Հանքերևակման տեղամասի հետախուզման և գնահատման նպատակով նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները.

- 1:1000 մասշտաբի տեղագրական հանույթ,
- 72 գծ.մ. հետախուզահորերի անցում և լցում,
- 18 համախառը նմուշների վերցում:

Այս աշխատանքների իրականացման արդյունքում հնարավոր է շրջակա միջավայրի բնական բաղադրիչների վրա որոշակի ազդեցություններ, որոնց հնարավորինս չեզոքացման համար անհրաժեշտ է իրականացնել կանխարգելիչ և վերականգնողական միջոցառումներ:

Երկրաբանահետախուզական աշխատանքների ընթացքում Ընկերությունը օգտագործելու է միայն գործող ճանապարհները:

Հայցվող տեղամասում օգտակար հանածոյի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում տեխնաձին ճնշումներ են դրսևորվելու մթնոլորտի և լանդշաֆտային ամբողջականության վրա:

Մթնոլորտային օդ.

Երկրաբանահետախուզական աշխատանքների ընթացքում կիրառվող տեխնիկական միջոցը շատ կարճ ժամանակով դառնալու է վնասակար գազերի և փոշու արտանետման աղբյուր: Համաձայն շրջակա միջավայրի պահպանությանը վերաբերվող նախագծման նորմերի (СНИП 11-01-95, СНИП 1.02.01-85)՝ սահմանային թույլատրելի խտությունները ածխածնի օքսիդի, ազոտի օքսիդի, մրի և ծծմբային գազի համար համար համապատասխանաբար կազմում են 0,0005գ/մ³; 0,000085գ/մ³; 0,00015գ/մ³; 0,0005գ/մ³: Նախնական հաշվարկներին համաձայն, աշխատանքների ընթացքում վնասակար գազերի (ազոտի օքսիդ, ածխածնի երկօքսիդ, մուր) առավելագույն կոնցենտրացիաները չեն գերազանցելու նորմատիվային փաստաթղթերով ամրագրված սահմանային թույլատրելի խտությունները:

Ջրային ավազան. Ջրային ռեսուրսների աղտոտում տեղի չի ունենա, քանի որ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում: Նախնական տվյալներով, մերձմակերևութային գրունտային ջրերի հորիզոններ տարածքում չկան: Դաշտային աշխատանքների տևողությունը կարող է կազմել 1-2 օր(72 գծ.մ. հետախուզահորերի անցում, նմուշարկում, փաստագրում և լցնում):

Վառելիքի, նավթամթերքի հոսակորուստները բացառվելու են, քանի որ էքսկավատորըն աշխատելու է մեկանգամյա լիցքավորումով՝ նախապես, տարածքից դուրս լցակայանում:

Անձրևաջրերը և ձյան հոսքերը տարածքից կհեռանան բնական առվակների միջոցով, քանի որ տարածքը գտնվում է գետահունային մասում:

Հողային ծածկույթ.

Հետախուզական փորվածքներով խախտվող տարածքները հանդիսանում են բուսազուրկ անօգտագործելի տարածքներ:

Մինչև 5 մ խորությամբ յուրաքանչյուր հետախուզահորի անցման աշխատանքների կարճատև (մոտ 20 րոպե) տևողությամբ պայմանավորված տարածքի աղտոտում յուղերով և վառելիքներով չի սպասվում: Աշխատանքների ընթացքում արտադրական թափոններ չեն առաջանա, քանի որ հանված նյութը հետ է լցվելու փորվածք նմուշարկելուց հետո, ինչը էականորեն մեղմում է շրջակա միջավայրի վրա ընդերքօգտագործման բացասական ազդեցությունը:

Խախտված հողերի լեռնատեխնիկական վերականգնումը կատարվելու է սահմանափակ ծավալով: Հետախուզական աշխատանքների ավարտից հետո փորվածքների վերականգնման համար նախատեսվում է օգտագործել փորվածքներից հանված դատարկ ապարները, քանի որ բուսահողային շերտը բացակայում է: Փորվածքների վերականգնման արժեքը (32հազ. դրամ) մտնում է ուսումնասիրության ծրագրի ամփոփ նախահաշվի մեջ:

Աղմուկ և թրթռումներ.

Մակերեսային լեռնային փորվածքների անցման ժամանակ թեթև էքսկավատորի տեղաշարժը տեղամասի սահմաններում դառնալու է 1-2օրյա աղմուկի աղբյուր:

Բուսական և կենդանական աշխարհ.

Երկրաբանական ուսումնասիրության ընթացքում կկատարվի տեղամասի և հարակից շրջանի դիտարկում՝ համաձայն ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի N781-Ն որոշմամբ սահմանված կարգի: Դրա նպատակն է ապահովել վայրի բուսատեսակների բազմազանության ամբողջականությունը, բուսական ծածկույթի ջրապահպան, հողապաշտպան, կլիմայակարգավորիչ և ռեկրեացիոն հատկությունների անխաթարությունը: Բուսականության բացակայության պարագայում բուսական աշխարհի վրա որևէ ազդեցություն չի կարող լինել: Գյուղին մոտ լինելու և տարեկան հեղեղումների պատճառով տարածքում կենդանիների բներ և կենդանական աշխարհի ներկայացուցիչներ չկան:

Բնության հատուկ պահպանվող տարածքներ

Արջուտի ձորի ԱԿԽ-ի հանքերևակման շրջանում հայտնի են Փամբակի և Ծաղկունյաց լեռնաշղթաների լանջերին գտնվող Կովկասյան մրտավարդենու, Մարգահովիտի և Գյուլաքարակի սոճու պետական արգելավայրերը, ինչպես նաև Դիլիջանի ազգային պարկը:

Նշված ԲՀՊՏ-ները գտնվում են հանքերևակումից 10 – 20 կմ հեռավորության վրա:

Այդ պատճառով ծրագրավորվող երկրաբանահետախուզական աշխատանքները որնիցե կերպ չեն ազդելու հատուկ պահպանվող տարածքների էկոհամակարգերի վրա:

Շրջակա միջավայրի բաղադրիչները	Գործողություններ
	Մակերեսային լեռնային փորվածքների անցում
Մթնոլորտային օդ	ցածր կարճատև
Ջրեր	-
Հողեր	ցածր կարճատև
Կենսաբազմազանություն	-
Բնության հատուկ պահպանվող տարածքներ	-
Պատմամշակութային հուշարձաններ	-

5.ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆԸ ԵՎ ՆՎԱԶԵՑՄԱՆԸ ՈՒՂԴՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները՝ հաշվի առնելով, որ դաշտային աշխատանքների տևողությունը կազմելու է 1-2օր .

✓ Խախտված հողերի վերականգնում:

Տեղամասի տարածքում աշխատանքների անվտանգ իրականացման նպատակով.

- աշխատանքի են թույլատրվում անձիք, որոնք ունեն հատուկ պատրաստվածություն և որակավորում,
- օգտագործել սարքավորումներ, որոնք համապատասխանում են անվտանգության պահանջներին և սանիտարական նորմերին,
- աշխատանքի ժամանակ պետք է պահպանվեն անվտանգության տեխնիկայի կանոնները:

6.ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ (ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ) ՊԼԱՆ

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են մշտադիտարկումներ՝ կապված օդի, ջրի, հողի, բուսական և կենդանական աշխարհի վրա նախատեսված աշխատանքների հնարավոր հետևանքների փաստման համար՝ թեև դաշտային աշխատանքները կատարվելու են 1-2 օրվա ընթացքում.

Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ մակերևութային փորվածքների անցման ժամանակ: Հետևաբար, տեղամասի տարածքի համար որպես մթնոլորտային օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշ պետք է ընդունել. փոշի 0.2մգ/մ^3 , ծծմբի երկօքսիդ 0.02մգ/մ^3 , ազոտի երկօքսիդ 0.008մգ/մ^3 և ածխածնի օքսիդ 0.4մգ/մ^3 :

1. Ջրերի նմուշառում գարնան ամիսներին՝ մինչև երևակման տարածքը և երևակման տարածքից հետո,
2. Հողերից նմուշառում հարակից տարածքից աշխատանքների վերջում:

Մշտադիտարկման կետերի տեղադիրքը ներկայացված է ստորև:

«Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N191-Ն որոշման համաձայն ներկայացվում է մշտադիտարկումների աղյուսակը:

Մշտադիտարկումների իրականացման նպատակով ընկերությունը նախատեսում է հատկացնել 100հազ.դրամ:


ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Մշտադիտարկումների օբյեկտը	Մշտադիտարկումների վայրը	Ցուցանիշը	Մշտադիտարկումների տեսակը	Նվազագույն հաճախականությունը
Մակերևութային ջրեր	շահագործական փորվածքների արտահոսքեր, հիդրոտեխնիկական կառույցների արտահոսքեր, ջրերի հեռացման համակարգեր, կենացաղային արտահոսքեր	ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75-Ն որոշմամբ սահմանված նորմեր	նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն, հոսքի ուսումնասիրություն	շաբաթական մեկ անգամ
Ստորերկրյա ջրեր	Հանքավայրի շրջակայքում առկա բնական աղբյուրների ելքեր, ստորգետնյա ջրերի հորիզոնների դիտակետեր	- ջրերի քիմիական կազմ, - մակարդակ	նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն	ամսական մեկ անգամ
Մթնոլորտային օդ	բացահանքի տարածք, ճանապարհներ, արտադրական հրապարակ, ընդերքօգտագործման թափոնների օբյեկտի տարածք, ազդակիր համայնքներ, ըստ քամիների վարդերի գերակշռող ուղղությունների արտանետումների աղբյուրից 5 կմ հեռավորություն	- հանքափոշի, այդ թվում՝ ծանր մետաղներ և կախյալ մասնիկներ (PM10 և PM2.5), ածխածնի օքսիդ, ածխաջրածիններ, ազոտի օքսիդներ, մուր, ծծմբային անհիդրիդ, բենզ(ա)պիրեն, մանգանի օքսիդներ, ֆտորիդներ, երկաթի օքսիդներ, ֆտորաջրածին	նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն, չափումներ ավտոմատ չափման սարքերով	շաբաթական մեկ անգամ՝ 24 ժամ տևողությամբ

<p>Հողային ծածկույթ</p>	<p>շահագործական փորվածքներ, արտադրական հրապարակ, ընդերօգտագործման թափոնների օբյեկտի տարածք, վերամշակող գործարանների, արտադրամասերի շրջակայք</p>	<p>- հողերի քիմիական կազմը (pH, կատիոնափոխանակման հատկությունները, էլեկտրահաղորդականության հատկանիշներ, մետաղների պարունակությունը՝ Fe, Ba, Mn, Zn, Sr, B, Cu, Mo, Cr, Co, Hg, As, Pb, Ni, V, Sb, Se), - հողերի կազմաբանությունը՝ կավի պարունակությունը, բաշխումն ըստ մասնիկների չափերի, ջրակլանումը, ծակոտկենությունը, - հումուսի պարունակությունը, - հողերում նավթամթերքների պարունակությունը</p>	<p>նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն, չափումներ ավտոմատ չափման սարքերով</p>	<p>- տարեկան մեկ անգամ - ամսական մեկ անգամ</p>
<p>Վայրի բնություն, կենսամիջավայր, կարմիր գրքում ընդգրկված, էնդեմիկ տեսակներ</p>	<p>ընդերօգտագործման տարածքին հարակից շրջան</p>	<p>տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների քանակ, աճելավայրերի և ապրելավայրերի տարածք, պոպուլյացիայի փոփոխություն</p>	<p>հաշվառում, նկարագրություն, քարտեզագրում</p>	<p>տարեկան մեկ անգամ</p>

ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ
 (արտատպված է K-38-113-Ե-Յ և K-38-113-Ե-Դ թերթերից)
 Մասշտաբ 1:25000

Կոորդինատային համակարգը՝ WGS-84 (ARMREF 02)



Հ/Հ	Կոորդինատները	
	X	Y
1	4524052	8447452
2	4524136	8447462
3	4524212	8447491
4	4524491	8447401
5	4524553	8447372
6	4524546	8447426
7	4524457	8447467
8	4524299	8447512
9	4524225	8447509
10	4524058	8447516

Պ Ա Յ Մ Ա Ն Ա Կ Ա Ն Ն Շ Ա Ն Ն Ե Ր

- Երկրաբանահետախուզական աշխատանքների տարածք
- Մոնիտորինգի դիտակետերը.
- 1 ● ջրերի - X=4524072.4, Y=8447494.5 2 ● օդի - X=4524519.7, Y=8447419.5 3 ● հողի - X=4524384.8, Y=8447514.8

Նկար 14. Իրավիճակային հատակագիծ մշտադիտարկումների կետերով

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մթնոլորտային արտանետումների գույքագրման ձեռնարկ: EMEP/EEA
2. “Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգ” հաստատված ՀՀ Կառավարության 2005թ. հունվարի 25-ի N 91 – Ն Որոշմամբ
3. Հայաստանի Ազգային Ատլաս: Երևան, 2007
4. Հայաստանի բնաշխարհ, 2006
5. ՀՀ բույսերի կարմիր գիրք, 2009
6. ՀՀ կենդանիների կարմիր գիրք, 2009
7. ՀՀ Լոռու մարզպետարանի պաշտոնական կայք
8. ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևաբանության և Մոնիթորինգի Կենտրոն» ՊՈԱԿ-ի 2019թ. տեղեկագիր
9. ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևաբանության և Մոնիթորինգի Կենտրոն» ՊՈԱԿ-ի 2020թ. տեղեկագիր